



Գյուղական համայնքի ջրամատակարարման պատշաճ կառավարում

Մարդու հիմնական կարիքների բավարարման համար միջազգայնորեն ընդունված ջրաքանակներն են՝ խմելու նպատակով՝ 3-5լ/օր, հիգիենայի համար՝ 10-15լ/օր, սանիտարահիգիենիկ կարիքների համար՝ 10-20լ/օր, կերակուր պատրաստելու համար՝ 10-15լ/օր:

Հայաստանը չնայած հարուստ է ստորերկրյա բարձրորակ ջրի աղբյուրներով, սակայն ներկայումս շուրջ 250 քաղաքային և գյուղական բնակավայրերի ավելի քան 200 հազար բնակիչ օգտվում է մակերևութային ջրաղբյուրներից՝ լեռնային գետերից:

Հանրապետության խմելու ջրի մաքրման կայանների համար որպես ջրաղբյուր հիմնականում ընտրված են լեռնային գետերի վերին հոսանքները, որոնց ջրերը մանրէաբանական առումով համեմատաբար մաքուր են՝ աղտոտված չեն կենցաղային կամ արտադրական կեղտաջրերով, գյուղատնտեսական պարարտանյութերով ու թունաքիմիկատներով:

Սակայն հանրապետության խմելու ջրի գրեթե բոլոր մաքրման կայանները, որոնք կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում, անբավարար շահագործման պատճառով ներկայումս հայտնվել են ծանր իրավիճակում, որի հետևանքով բնակչությունը ստանում է ցածր որակի ջուր: Խաթարված են ջրի մաքրման տեխնոլոգիական գործընթացները, և նման պայմաններում հնարավոր չէ ապահովել խմելու ջրի չափորոշիչների պահանջներին համապատասխանող որակի ջրի արտադրությունը:

Խմելու ջուրը քիչ հասանելի է գյուղական բնակավայրերում: Կան համայնքներ (560), որոնք իրենք են ապահովում իրենց ջրամատակարարումը և ջրահեռացումը: Տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներն այդ համայնքներում անբավարար են:

Խմելու ջրի մատակարարման համայնքային ծառայությունների հաշվառումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմնի և/կամ խմելու ջուր օգտագործողների ընկերության կողմից՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած սակագներով (կամ վճարներով)՝ հաշվի առնելով համակարգի սպասարկման և հետագա զարգացմանն ուղղված ծախսերը, ինչպես նաև ծառայություններից օգտվողների թվաքանակը:

Խմելու ջրի մատակարարման այլընտրանքային ծառայություն իրականացնող կազմակերպությունը, կնքված պայմանագրի համաձայն, խմելու ջուրը բաշխում, հաշվառում և իրացնում է սպառողներին՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված վճարներով:

Ջրի աղտոտման հիմնական ուղիները

Մարդիկ օգտագործում են ջուրը, իրենք էլ՝ աղտոտում: Քաղաքաբնակ վայրերում բաց ջրավազաններն աղտոտվում են տնտեսա-կենցաղային և արդյունաբերական կոյուղու կազմակերպված արտահոսքերով, իսկ գյուղական համայնքներում՝ աղբանոցից, հորատիպ

գուգարանների կեղտաջրերից, գոմաղբից, գոմերից ու հավաքներից գոյացած անկազմակերպ արտահոսքերով: Բաց ջրավազանները և ստորերկրյա ջրերը, հատկապես՝ գրունատյին ջրերը, կարող են աղտոտվել ձնհալի և անձրևաջրերի միջոցով, որոնց մեջ հողից կամ ձնից ներծծվում են տարբեր տեսակի պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլ վնասակար նյութեր:

Գյուղական համայնքի ջրամատակարարման համակարգի պատշաճ կառավարումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ջրագծերի տեխնիկական սպասարկման և շահագործման նկատմամբ մշտական հսկողության իրականացում,
- խմելու ջրի որակի հաճախակի վերահսկում, այդ նպատակով՝ խմելու ջրի մանրէաբանական հետազոտության իրականացում,
- ջրային աղբյուրների շուրջ սանիտարական պահպանության գոտիներում պատշաճ ռեժիմի ապահովում (շրջակա միջավայրն աղտոտող օբյեկտները՝ գոմեր, հավաքներ, գուգարաններ, աղբի և գոմաղբի կուտակման կետեր և այլն, պետք է գտնվեն ջրային աղբյուրներից 50 մետրից ոչ պակաս հեռավորության վրա),
- օրվա կարգավորման ջրամբարի շուրջ սանիտարապաշտպանիչ գոտու ապահովում և մշտական հսկողության իրականացում,
- մակերեսային ջրամատակարարման աղբյուրի սանիտարական պահպանման առաջին գոտում ցանկացած կեղտաջրերի թափման արգելում, ինչպես նաև լողանալու, լվացք անելու, անասուններին ջուր խմեցնելու և այլ ջրօգտագործման տեսակների արգելում, որոնք ազդում են խմելու ջրի որակի վրա,
- ջրատարների անցկացման արգելում աղբավայրերի, ասենիզացիոն, ոռոգման և գոման դաշտերի, գերեզմանոցների, անասնագերեզմանոցների տարածքներով, ինչպես նաև մագիստրալային ջրատարների անցկացման արգելում արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտների տարածքներով,
- ջրամատակարարման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության ապահովում:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից «Դիտակ համայնքի բնակչությունը՝ հանուն անվտանգ խմելու ջրի կորստի կանխման» ծրագրի շրջանակում՝ Կոկա-Կոլա ընկերության աջակցությամբ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Ջրի ամեն մի կաթիլն արժեք ունի» ծրագրի շրջանակում: